Ինչ է փոխվել ´´Արտոնագրային վճարների մասին´´ ՀՀ օրենքում

03.04.2012 00:00

01.04.2012թ.-ից ուժի մեջ մտավ ´´Արտոնագրային վճարենրի մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին´´ ՀՀ օրենքը /ընդունվել է 07.12.2011թ.-ին/.

Օրենքի համաձայն մի շարք գործունեության տեսակներ պետությունը դուրս է հանել ´´Հաստատագրված վճարների մասին´´ ՀՀ օրենքի կարգավորման ոլորտից և մցրել ´´Արտոնագրային վճարենրի մասին´´ ՀՀ օրենքի կարգավորման ոլորտ: Միաժամանակ տվյալ գործունեության տեսակներով որոշներով զբաղվող տնտեսավարող սուբյեկտերի կողմից վճարվող գումարների չափը մեծացել է՝ նախկինում որպես հաստատագրված վճար վճարվելու համեմատ:

Սակայն բացի նշված փոփոխությունները՝ օրենքի տարբեր հոդվածներում շարադրված են հետևյալ պահանջները՝

1. Արտոնագրային վճար վճարողը պետք է նախ դիմի իր հաշվառման վայրի հարկային մարմին, որպեսզի ստանա արտոնագիր:
2. Արտոնագրերը տրվում են առնվազն եռամսյակներով:
3. Արտոնագրային վճար վճարողը պետք է նախապես, մինչև արտոնագրի ստանալը, վճարի արտոնագրային վճարը՝ տվյալ ժամանակահատվածի համար /հիշեցնեմ՝ առնվազն երեք ամիս/
4. Արոնագրային վճարի հաշվարկման համար հիմք հանդիսացած ելակետային տվյալները որևէ ժամանակահատվածի (եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա) համար տվյալ գործունեության իրականացման վայրի մասով չեն կարող նվազեցվել:

Մինչդեռ մի շարք տնտեսավարող սուբյեկտներ, օրինակ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտները, /մասնավորապես բացօթյա սրճարանները, որոնցից մեկը դիմել էր մեզ պարզաբանում ստանաու համար/ իրենց գործունեության ելակետային տվյալները, կախված օբյեկտիվ գործոններից, ստիպված են լինում փոփոխել սահմանված ժամանակահատվածի ընթացում: Օրինակ՝ սրճարանն ունի մեծ մակերես, թե փակ, թե բաց մասեր: Երրորդ եռամսյակի ավարտից հետո, այն է՝ 2012թ.-ի սեպտեմբեր ամիսը, սրճարանը պետք է դիմի հարկային մարմին ստանալու համար արտոնագիր 4-րդ եռամսյակի համար /հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր/: Սակայն սրճարանի տնօրենը նշում է /և դա հանրահայտ է/, որ նոյեմբեր ամսվա առաջին կեսին , կախված եղանակային պայմաններից, սրճարանների բացօթյա հատվածները փակվում են և, հետևաբար՝ տվյալ գործունեության տեսակի ելակետային տվյալները /մակերես/ անխուսափելիորեն նվազում են: Մինչդեռ ըստ օրենքի՝ տվյալ սուբյեկտն **իրավունք չունի նվազեցնել իր ելակետային տվյալները** /հետևաբար նաև՝ վերահաշվարկել և հետ ստանալ վճարի մի մասը/ և նա արդեն վճարել է արտոնագրային վճարը ամբողջ եռամսյակի կտրվածքով:

Կարծում ենք, որ օրենքի նշված դրույթները հակասահմանադրական են և խախտում են ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով երաշխավորված՝ տվյալ տնտեսավարող սուբյեկտների՝
1. սեփականության իրավունքը
2. ազատ տնտեսական գործունեության իրավունքը
Խախտվում է նաև իրավական պետության մասին հիմնարար նորմ-սկզբունքը:

Ստացվում է հետևյալ իրադրությունը՝
Մի կողմից պետությունը հայտարարում է, որ տնտեսության զարգացման գրավականներից մեկը փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցելն է, մյուս կողմից պետությունը խախտում է փոքր ու միջին ձեռնարկատերերի սեփականության իրավունքը և տնտեսական գործունեության ազատությունը:

Վարուժան Վարդանյան

Փաստաբան, իրավախորհրդատու
´´Վարդանյան և Գործընկերներ´´
www.vardanyanlaw.com

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })